


**Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 02.04.2017 թ.
ընտրությունների արդյունքում դատական կարգով
ներկայացված բողոքների ընթացքի մասին**

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

Երևան

Մայիս · 2018 թ.



Պատրաստված «Իրավունքի Եվրոպա միավորում»
 իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից
 «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում

Սույն զեկուցը կազմվել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ վերջինիս, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված դիտորդական առաքելության արդյունքում:

Դիտորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության ազգային ինստիտուտի և Թբիլիսիում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան համաֆինանսավորմամբ իրականացվող «2017 թ. խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողություն» ծրագրի շրջանակներում:

Ձեկույցի համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը:

Ձեկույցը որևէ ձևով չի արտացոլում Եվրոպական միության, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային ինստիտուտի տեսակետերը:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ձևավորվել է 2013 թ.¹ նպատակ ունենալով վերահսկելու համապետական ու տեղական ընտրությունները Հայաստանում և դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանն ու Ժողովրդավարության միջազգային չափանիշներին: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կայքէջն է. <https://www.citizenobserver.am/>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նախաբան.....	5
Բողոքարկման գործընթացը ՀՀ վարչական դատարանում.....	7
Բողոքարկման գործընթացը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում.....	27
Բողոքարկման գործընթացը ՀՀ վճռաբեկ դատարանում....	40
Ընտրական իրավունքի պաշտպանության նպատակով Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան ներկայացված դիմումները	41

1. ՆԱԽԱԲԱՆ

2017թ. ապրիլի 3-ին և 4-ին ինչպես դիտորդների սուբյեկտիվ, այնպես էլ՝ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության (այսուհետ՝ նաև ՔԴՆ-ի) շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների անունից 309 դիմում-բողոքներ են ներկայացվել 37 տարածքային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ), որոնցից կեսից քիչ ավելին՝ 160 բողոք, կապված է եղել օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հետ, իսկ 149-ը՝ սուբյեկտիվ: Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ ներկայացված դիմում-բողոքների ճնշող մեծամասնության հիման վրա վարչական վարույթների հարուցումը մերժվել է տարածքային ընտրական հանձնաժողովների (այսուհետ՝ նաև ՏԸՀ-ների) կողմից:

Տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ նաև ԿԸՀ) է ներկայացվել ընդհանուր առմամբ 109 բողոք, որոնց ճնշող մեծամասնության հիման վրա վարչական վարույթների հարուցումը մերժվել է:

ՏԸՀ-ների և ԿԸՀ-ի որոշումների դեմ ներկայացվել է ընդհանուր առմամբ 96 հայց: Դրանցից 65-ը վարչական դատարանի կողմից ընդունվել են վարույթ: 28 գործով ՀՀ վարչական դատարանի՝ հայցադիմումները վարույթ չընդունելու մասին որոշումների դեմ ներկայացվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 15-ը բավարարվել են ամբողջությամբ, իսկ 5-ը՝ մասնակի: Բողոքներից 5-ը բերվել է պետական տուրքի հաշվարկման որոշումների դեմ: 13 վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է և ներկայացվել են վճռաբեկ բողոքներ:

Աժ ընտրությունների դիտարկման արդյունքում արձանագրված խախտումների վերաբերյալ ներկայացված հայցերից 7-ը բավարարվել են մասնակիորեն (վարչական գործեր թիվ ՎԴ/3980/05/17, ՎԴ/4067/05/17, ՎԴ/3991/05/17, ՎԴ/3992/05/17, ՎԴ/4053/05/17, ՎԴ/4071/05/17 և ՎԴ/4072/05/17), 4-ը՝ մերժվել (վարչական գործեր թիվ ՎԴ/4086/05/17, ՎԴ/5381/05/17, ՎԴ/4052/05/17 և ՎԴ/4063/05/17):

11 գործով (թիվ ՎԴ/4067/05/17, ՎԴ/3980/05/17, ՎԴ/5381/05/17, ՎԴ/4086/05/17, ՎԴ/4052/05/17, ՎԴ/3991/05/17, ՎԴ/3992/05/17, ՎԴ/4053/05/17, ՎԴ/4063/05/17, ՎԴ/4071/05/17, ՎԴ/4072/05/17) ներկայացվել են վերաքննիչ բողոքներ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ: Թիվ ՎԴ/4067/05/17 վարչական գործով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշման դեմ 2018թ. ապրիլի 20-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք:

2. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4086/05/17, ՎԴ/3994/05/17, ՎԴ/4052/05/17, ՎԴ/3991/05/17, ՎԴ/3992/05/17, ՎԴ/3980/05/17, ՎԴ/4053/05/17, ՎԴ/4063/05/17, ՎԴ/4072/05/17, ՎԴ/4067/05/17, ՎԴ/4102/05/17, ՎԴ/5385/05/17, ՎԴ/5381/05/17, ՎԴ/4097/05/17 վարչական գործերով կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտեր: Դատարանների վճիռներով հայցադիմումներից յոթը (ՎԴ/3994/05/17, ՎԴ/4086/05/17, ՎԴ/4052/05/17, ՎԴ/4097/05/17, ՎԴ/5385/05/17, ՎԴ/5381/05/17, ՎԴ/4063/05/17,) ամբողջությամբ մերժվել են, իսկ յոթը (ՎԴ/3980/05/17, ՎԴ/4053/05/17, ՎԴ/4067/05/17, ՎԴ/4102/05/17, ՎԴ/3991/05/17, ՎԴ/3992/05/17, ՎԴ/4072/05/17) բավարարվել են մասնակի: Վարչական դատարանի յոթ վճիռների դեմ ներկայացվել են վերաքննիչ բողոքներ՝ դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու պահանջով: Մասնակի բավարարված դատական ակտերի դեմ ևս ներկայացվել են վերաքննիչ բողոքներ՝ դատական ակտերը չբավարարված պահանջների մասով բեկանելու պահանջով: Ներկայացված վերաքննիչ բողոքների հետ միաժամանակ ներկայացվել են բողոքաբեր հասարակական կազմակերպություններին և դիտորդներին պետական տուրքից ազատելու վերաբերյալ միջնորդություններ: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը երկու գործով (ՎԴ/3980/05/17, ՎԴ/4086/05/17) կայացրել է որոշում պետական տուրքից ազատելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու մասին և վերադարձնել վերաքննիչ բողոքները, որոնք բողոքարկվել են ՀՀ վճռաբեկ դատարան: Վարչական վերաքննիչ դատարանի կողմից մյուս բոլոր գործերի քննությունը դեռ ընթացքի մեջ է:

Դատարանները, վարչական գործերի շրջանակներում անդրադառնալով հայցադիմումների հիմք-հիմնավորումների մի մասին, դրանք համարել են անհիմն, իսկ որոշ հիմնավորումներ նույնիսկ քննության առարկա չեն դարձրել:

Թիվ ՎԴ/4102/05/17 գործով անդրադառնալով ընտրական հանձ-

նաժողովի/հանձնաժողովի նախագահի գործողությունների (անգործության) իրավաչափության գնահատման հարցին՝ դատարանը գտել է, որ օրենսդիրն իրավունք չի վերապահել դիտորդին պահանջելու հանձնաժողովի նախագահից վերացնելու տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված խախտումները: Դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդրի կողմից դիտորդին իրավունք չի վերապահվել նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման, խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատվություն կրող անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու, համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության վերացնելու, հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումներն ըստ ենթակայության վերահասցեագրելու, տեղամասերում քվեարկության արդյունքների վրա խախտումների ազդեցությունը քննարկելու և գնահատելու միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացնել: Անդրադառնալով տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների (անգործության) ոչ իրավաչափության հարցին՝ դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կարգավիճակից բխող սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմքով՝ դատարանն արձանագրել է, որ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու փաստի վերաբերյալ որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի ներկայացվել դատարանին: Անդրադառնալով ՏԸՀ-ի և ԿԸՀ-ի որոշումների ոչ իրավաչափության հարցին (օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման մասով)՝ դատարանն արձանագրել է, որ դիտորդը, ինչպես նաև վերջինիս հավատարմագրած՝ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունը, ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն այն դեպքում, եթե

գտնում է, որ խախտվել է իր՝ օրենսգրքով սահմանված իրավունքը՝ սուբյեկտիվ իրավունքը, իսկ օբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը հանդես գալու իրավասությամբ վերջինս օժտված չի: Դատարանն այդ մասով իրավաչափ է համարել ՏԸՀ-ի որոշումը՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ և այդ մասով որոշումն անփոփոխ թողնելու մասին ԿԸՀ-ի որոշումը: Դատարանը քննարկման առարկա չի դարձրել ՏԸՀ-ների կողմից դիմում-բողոքների վերաբերյալ որոշումները ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ կայացնելու հարցը: Անդրադառնալով ԿԸՀ-ի որոշման ոչ իրավաչափության հարցին՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության ընտրական իրավունքների, այդ թվում՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքին՝ դատարանը հավասարապես կիրառելի է համարել դիտորդի և դիտորդական կազմակերպության ընտրական իրավունքների, այդ թվում՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքի խախտման հիմքով ՏԸՀ-ի որոշման կապակցությամբ բերված պատճառաբանություններն ու հիմնավորումները: Դատարանն ըստ էության չի անդրադարձել նաև ՏԸՀ-ի կողմից Հայցվորների դիմում-բողոքի հիման վրա որոշման կայացման ժամկետներին, որոնք բացառել են այդ որոշման դեմ ներկայացված բողոքը ԿԸՀ-ի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում գնահատելու հնարավորությունը: Դատարանը, անդրադառնալով դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ *օբյեկտիվ իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասությամբ օժտված չլինելու հանգամանքին*, որևէ կերպ անդրադարձ չի կատարել ՏԸՀ-ի և ԿԸՀ-ի որոշումները՝ հայցվոր հասարակական կազմակերպությունների կողմից վիճարկելու իրավասուբյեկտության վերաբերյալ՝ հայցադիմումով ներկայացված հիմնավորումներին: Մինչդեռ, հասարակական կազմակերպության իրավասուբյեկտության վերաբերյալ հիմքերն ու հիմնավորումները մանրամասն շարադրված են եղել Հայցադիմումով: Դատարանը, թեև ընդունել է, որ

ՏԸՀ ներկայացված դիմումում մեջբերված սուբյեկտիվ իրավունքների ենթադրյալ խախտումների մասով վարչական վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ ՏԸՀ-ի որոշումը և այդ մասով որոշումն անփոփոխ թողնելու մասին ԿԸՀ-ի որոշումը ոչ իրավաչափ են, սակայն չի անդրադարձել հայցադիմումում բարձրացված այն հարցին, որ ՏԸՀ որոշման բովանդակությունից պարզ է դառնում, որ տարածքային հանձնաժողովի կողմից իրականում իրականացվել է վարչական վարույթ: Այսինքն, ձևականորեն կայացնելով վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշում՝ իրականում հանձնաժողովի կողմից կայացվել է ըստ էության որոշում՝ առանց վարչական վարույթ հարուցելու: Դատարանն ընդհանրապես չի անդրադարձել հայցադիմումի հիմքերին, որոնք վերաբերել են այն հանգամանքին, որ Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում իրականացված դիտորդական առաքելության և ընտրական հանձնաժողովների որոշումների բողոքարկման գործընթացում արձանագրվել են մի շարք փաստեր, որոնք վկայում են այն մասին, որ տարածքային ընտրական հանձնաժողովները գործել են **ոչ թե որպես անկախ վարչական մարմիններ, այլ իրենց գործառույթներն իրականացրել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անմիջական համակարգման և վերահսկողության պայմաններում:**

Թիվ ՎԴ/4063/05/17 վարչական գործով դատարանը, անդրադառնալով տեղամասային ընտրական հանձնաժողովների/հանձնաժողովների նախագահների գործողությունների (անգործության) իրավաչափության գնահատման հարցին, նախ՝ անդրադարձել է դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից արձանագրված օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու հիմքով տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների իրավաչափության հարցին: Այս կապակցությամբ դատարանի հիմնավորումները նույնությամբ կրկնում են նախորդ գործում արտացոլված հիմնավորումները: Ինչ վերաբերում է դիտորդի կողմից գրանցամատյանում գրառում կատարելու հարցին, ապա դատարանը նշել է, որ գրանցամատյանում

տյանում գրառում կատարելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու փաստի առթիվ որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի ներկայացվել դատարանին: Դատարանն անտեսել է հայցադիմումում մատնանշված մյուս տեղամասերում արձանագրված խախտումները ԿԸՀ-ին ուղղված դիմումում ներառելու և դրանք ԿԸՀ-ի լիազորությունների շրջանակներում վիճարկելու և համապատասխան միջոցների ձեռնարկման հարցը, ինչով էլ բացատրվում է բոլոր Հայցվորների՝ պատշաճ սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը: Անդրադառնալով ՀՀ ԿԸՀ գրությունը (վարչական ակտը) և/կամ ԿԸՀ ներկայացված դիմում-բողոքն առանց քննարկման վերադարձնելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջին՝ դատարանն արձանագրել է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների կամ անգործության մասին բողոքները ոչ իրավասու հանձնաժողովին ներկայացվելու դեպքում համապատասխան վարչարարության ընթացակարգի նկատմամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված են որոշակի առանձնահատկություններ, մասնավորապես, որ այդ դեպքում ոչ իրավասու ընտրական հանձնաժողովը դիմումը չի քննարկում և գրությամբ վերադարձնում է դիմումատուին՝ նշելով պատճառները: Հետևաբար այս վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը կիրառելի չէ այս վարույթի նկատմամբ:

Թիվ ՎԴ/3980/05/17 և ՎԴ/4067/05/17 վարչական գործերով դատարաններն անհրաժեշտ չեն համարել առանձին-առանձին անդրադառնալ վկայակոչված մյուս փաստարկների գնահատմանը, քանի որ համարել են, որ բովանդակային առումով դրանք արդեն իսկ հերքված են դատարանի վերլուծություններով և հիմնավորումներով: Ուշագրավ է, որ թիվ ՎԴ/3994/05/17 վարչական գործով դատարանը միայն անդրադարձել է հասարակական կազմակերպության իրավասու օբյեկտության և դիտորդների խախտված իրավունքների հարցին:

Այսինքն՝ հայցադիմումում բարձրացված մյուս հարցերը քննարկման առարկա չեն դարձվել այն հիմնավորմամբ, որ դատարանը դրանք համարում է ամբողջությամբ անհիմն՝ փաստական և իրավական տեսանկյուններից:

Թիվ ՎԴ/3980/05/17, ՎԴ/4067/05/17 և ՎԴ/4086/05/17 վարչական գործերով դատարանները, անդրադառնալով վկայակոչված ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքների խախտման հարցին, դիրքորոշում են արտահայտել առ այն, որ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքի իրացման հնարավորությունը պայմանավորված է բողոքարկող սուբյեկտի իրավունքի պաշտպանության նպատակի առկայությամբ և օրենքով սահմանվել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների կազմ: Այնուհետև դատարանները որոշել են, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպություններին և դիտորդներին դիմում-բողոքներում նշված ընդհանուր (օբյեկտիվ) իրավունքների խախտմամբ պայմանավորված պահանջ ներկայացնելու իրավունք վերապահված չէ:

Թիվ ՎԴ/4053/05/17 վարչական գործով դատարանը համարել է, որ դիտորդները և հասարակական կազմակերպությունները տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով շահագրգիռ անձ չեն հանդիսանում, քանզի այդ հայցապահանջով իրենց որևէ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակ չի հետապնդվում:

Թիվ ՎԴ/3980/05/17, ՎԴ/4067/05/17 և ՎԴ/4086/05/17 վարչական գործերով դատարանները, անդրադառնալով դիտորդների գնահատականները տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում արձանագրելու, իսկ արդեն իսկ արձանագրված լինելու դեպքում՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու պահանջների իրավունքին և հանձնաժողովների նախագահների գործողություններով և/կամ անգործությամբ դիտորդների ընտրա-

կան իրավունքների խախտմանը, անհրաժեշտ են համարել պարզել, թե արդյոք հանձնաժողովների նախագահների գործողություններով (անգործությամբ) խախտվել են դիտորդների իրավունքները, ինչի կապակցությամբ արձանագրել են, որ հանձնաժողովի նախագահին դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու իրավունքը չի ներառում դիտարկման արդյունքում դիտորդի կողմից քվեարկության ընթացքում քվեարկության վերոնշյալ կարգի խախտման հետ չկապված խախտումները հանձնաժողովի գրանցամատյանում գրանցելու պահանջի իրավունք:

Թիվ ՎԴ/3994/05/17 վարչական գործով դատարանը համարել է, որ դիտորդները որևէ կերպ չեն հետապնդել իրենց ՀՀ ընտրական օրենսգրքով վերապահված իրավունքների պաշտպանության նպատակ և չեն հանդիսացել իրավասու սուբյեկտներ: Նաև հավելել է, որ գործում առկա չէ ապացույց այն մասին, որ որևէ պահանջ է ներկայացվել արձանագրված խախտումները տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցելու վերաբերյալ, և որ նման պահանջը չի կատարվել (կասկածն առաջանում է նաև այն հիմքով, որ, ըստ դիտորդի, արձանագրված խախտումը հանձնաժողովի անդամների կողմից վերացվել է, ինչը ողջամտորեն հանգեցնում է այն հետևության, որ դրա արձանագրման անհրաժեշտություն չի առաջացել), ուստի այդ մասով ապացույցների բացակայության դեպքում վերոհիշյալ փաստը չի կարող համարվել հաստատված:

Թիվ ՎԴ/4053/05/17 վարչական գործով դատարանն արձանագրել է, որ ապացուցման են ենթակա քվեարկության կարգի ենթադրյալ խախտման վերաբերյալ գնահատականն արձանագրելու պահանջի՝ դիտորդի կողմից ներկայացված լինելու և հանձնաժողովի նախագահի կողմից նման պահանջը բավարարելու փաստերը: Այնուհետև դատարանն արձանագրել է, որ չի ներկայացվել ապացույց, որով կհաստատվեին հիշյալ փաստերը: Դատարանը գտել է, որ վարչական մարմնի պարտականությունից դուրս է ինքնին վիճարկվող գործողությունների/անգործության/ առկայության/բացակայության փաստն ապացուցելու պարտականությունը:

Դատարանը, թիվ ՎԴ/3980/05/17 վարչական գործով անդրադառնալով ՏԸՀ և ԿԸՀ որոշումները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջներին, գտել է, որ դրանք ոչ իրավաչափ են, քանի որ ոչ իրավասու անձի (<Կ-ների և դիտորդների) կողմից ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումների հիման վրա վարչական վարույթ չհարուցելը և վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ դիմումից ակնհայտ է, որ տվյալ իրավունքը դիմումատուին չի պատկանում: Այսինքն՝ դատարանը փաստել է, որ իրավունքների խախտված լինելու հանգամանքի բացահայտումը կամ հերքումը կարող էր իրականացվել միայն անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում դիմումների ըստ էության քննության արդյունքում, այլ ոչ՝ դիմումների ընդունելության փուլում: Դատարանն արձանագրել է նաև, որ երբ ՏԸՀ որոշումը ենթակա է ճանաչման որպես ոչ իրավաչափ, ապա այդ ակտի բողոքարկման արդյունքում ընդունված ԿԸՀ որոշումը ևս ենթակա է ոչ իրավաչափ ճանաչման՝ անկախ այն հանգամանքից, թե բողոքարկման արդյունքում ընդունված որոշումն ինքնին իրավաչափ է, թե՛ ոչ: Նույն հարցի շուրջ դատարանը դիրքորոշում է արտահայտել թիվ ՎԴ/4053/05/17 գործի շրջանակներում՝ նշելով, որ ՏԸՀ դիմում-բողոք ներկայացնելով, հասարակական կազմակերպությունները և դիտորդները սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանն առնչվող մասով հանդես են եկել իրենց դիտորդական առաքելության սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, հետևաբար հասարակական կազմակերպությունների և դիտորդների սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանն առնչվող մասով, վարչական վարույթի հարուցումը մերժելն իրավաչափ չէ: Մինևույն ժամանակ դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունը և դիտորդն իրավասու չեն ընտրական գործընթացում հանդես գալու ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի պաշտպանությամբ:

Դատարանները քննարկման առարկա են դարձրել նաև ՏԸՀ-ների կողմից դիմում-բողոքների վերաբերյալ որոշումները ընտրություններ

րի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ կայացնելու հարցը (թիվ ՎԴ/3980/05/17, ՎԴ/4067/05/17 ՎԴ/4053/05/17, ՎԴ/4086/05/17 վարչական գործերով), սակայն ըստ էության քննարկման առարկա չի դարձվել ընտրությունների արդյունքների ամփոփման արդյունավետության տեսանկյունից այդ հանգամանքի բացասական իրավական հետևանքը: Փոխարենը՝ դատարաններն ընդամենը արձանագրել են, որ հանձնաժողովները որոշումները կայացրել են օրենքով սահմանված դիմումներին պատասխանելու և որոշումներ ընդունելու ժամկետներում: Հիշյալ հարցի կապակցությամբ դատարաններն արձանագրել են, որ ըստ էության խնդիրը օրենսդրական կարգավորումների անկատարությունն է, ինչին գնահատական տալը դուրս է ՀՀ վարչական դատարանի իրավասության շրջանակից:

Դատարանները, անդրադառնալով հասարակական կազմակերպությունների՝ որպես ընտրական իրավունքների պաշտպանությամբ ՀՀ վարչական դատարան դիմող սուբյեկտի հարցին (թիվ ՎԴ/3980/05/17, ՎԴ/4067/05/17, ՎԴ/3984/05/17, ՎԴ/4086/05/17 վարչական գործերով), եզրահանգել են, որ հասարակական կազմակերպությունն իրավասու չէ ՀՀ ընտրական օրենսգրքով անմիջականորեն իրեն չվերաբերող իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը կամ գործողությունը (անգործությունը): Վճիռներով արձանագրվել է, որ հասարակական կազմակերպությունը ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն ՀՀ ընտրական օրենսգրքով անմիջականորեն հենց իրեն վերաբերող իրավունքների մասով, որպիսիք են դիտորդի հավատարմագրման հարցերը:

Դատարանը, անդրադառնալով ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ՏԸՀ որոշումների հրապարակման և հասանելիության ապահովման սուղ ժամկետների հարցին և, դրանով պայմանավորված, վերադաս հանձնաժողով բողոքարկման դժվարություններին (թիվ ՎԴ/4086/05/17 վարչական գործով), գտել է, որ նման հարցի քննար-

կումն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանին է վերապահվում իրավաստեղծ գործընթացը վերահսկելու իրավազորությունը:

Թիվ ՎԴ/4067/05/17 վարչական գործով դատարանը, անդրադառնալով ԿԸՀ գրություններով ՀՀ ԿԸՀ ներկայացված դիմում-բողոքներն առանց քննարկման վերադարձնելու հարցին, գտել է, որ այն ենթակա չէ ոչ իրավաչափ ճանաչման, քանի որ բացակայում է այդ գործողությունը օրենքի խախտմամբ իրականացված լինելու վավերապայմանը:

Թիվ ՎԴ/4086/05/17 վարչական գործով դատարանը, անդրադառնալով ԿԸՀ 06.05.2017 թվականին նիստ հրավիրելու և նույն օրը որոշում կայացնելու իրավաչափությանը, գտել է, որ վարչական մարմինն օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս, վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունը պետք է իրականացնի դիմումը մուտքագրվելու օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում, այնուհետև նշել, որ նման պայմաններում դիտորդի իրավունքների միջամտություն տեղի չի ունեցել:

ՎԴ/3991/05/17 գործով դատարանն անդրադարձել է հասարակական կազմակերպությունների տվյալ գործով իրավասուբյեկտ լինել/չլինելու հարցին և որոշել, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով դիտորդական առաքելություն իրականացնելիս դիտորդական կազմակերպության հավատարմագրած դիտորդի սուբյեկտիվ իրավունքի խախտումը անմիջականորեն հանգեցնում է այդ կազմակերպության դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի խախտման և այդպիսի իրավունքի պաշտպանություն իրավասու է հայցելու ինչպես դիտորդը, այնպես էլ վերջինիս հավատարմագրած հասարակական կազմակերպությունը, որպիսի պայմաններում է միայն հնարավոր ապահովել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի լիարժեք իրացումը հասարակական կազմակերպությունների կողմից:

Դատարանը հիշյալ գործով վճռել է. «1. Հայցվորներ Հարութ Նալբանդյանի, Անի Հակոբյանի, Արմինե Բալայանի, Միհրան Միքայելյանի, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունների հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ թիվ 9/31, 9/35, 9/7, 9/30, 9/55, 9/36 տեղամասային ընտրական հանձնաժողով(ներ)ի նախագահ(ներ)ի գործողությունները (անգործությունը), թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 15-Ա որոշումը և կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 184-Ա որոշումը, որոնց հետևանքով խախտվել են հայցվորների իրավունքները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, բավարարել մասնակի՝04.04.2017թ.-ին թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացված դիմումի 4.-րդ, 6.-րդ, 7.-րդ, 8.-րդ 9.-րդ և 10.-րդ կետերում մեջբերված սուբյեկտիվ իրավունքների ենթադրյալ խախտումների մասով վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով ոչ իրավաչափ ճանաչել թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 15-Ա որոշումը և այդ մասով որոշումն անփոփոխ թողնելու մասին կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 184-Ա որոշումը: **Հայցվորներ՝** Հարութ Նալբանդյանի, Անի Հակոբյանի, Արմինե Բալայանի, Միհրան Միքայելյանի, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունների հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ թիվ 9/31, 9/35, 9/7, 9/30, 9/55, 9/36 տեղամասային ընտրական հանձնաժողով(ներ) ի նախագահ(ներ)ի գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով, ինչպես նաև թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 15-Ա որոշումը և կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 184-Ա

որոշումը մնացած մասով ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասով հայցը մերժել: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպության, Նոնա Արշակի Չաթոյանի, Սերյոժա Սևակի Գրիգորյանի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ թիվ 9/31, 9/35, 9/7, 9/30, 9/55, 9/36 տեղամասային ընտրական հանձնաժողով(ներ)ի նախագահ(ներ)ի գործողությունները (անգործությունը), թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 15-Ա որոշումը և կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 184-Ա որոշումը, որոնց հետևանքով խախտվել են հայցվորների իրավունքները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, մերժել: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովից և թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից հոգուտ Հայցվորներ Հարութ Նալբանդյանի, Անի Հակոբյանի, Արմինե Բալայանի, Միհրան Միքայելյանի, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունների բռնազանձել 4000 դրամ՝ որպես պետական տուրքի հատուցում: Պետական տուրքի հարցը մնացած մասով համարել լուծված:»:

Դատարանը ՎԴ/3992/05/17 գործով ևս անդարդարձել է հայցվոր հասարակական կազմակերպության իրավասուբյեկտության հարցին և գտել, որ դիտորդական կազմակերպության հավատարմագրած դիտորդի սուբյեկտիվ իրավունքի խախտումը անմիջականորեն հանգեցնում է այդ կազմակերպության դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի խախտման և այդպիսի իրավունքի պաշտպանություն իրավասու է հայցելու ինչպես դիտորդը, այնպես էլ վերջինիս հավատարմագրած հասարակական կազմակերպությունը, որպիսի պայմաններում է միայն հնարավոր ապահովել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի լիարժեք իրացումը հասարակական կազմակերպությունների կողմից:

Դատարանը սույն գործով վճռել է. «1. Հայցվորներ՝ Սերյոժա Գրի-

գորյանի, Արնաս Միկուլսկիի, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունների հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ թիվ 9/7, 9/43 տեղամասային ընտրական հանձնաժողով(ներ)ի նախագահ(ներ)ի գործողությունները (անգործությունը), թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 17-Ա որոշումը և կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 186-Ա որոշումը, որոնց հետևանքով խախտվել են հայցվորների իրավունքները, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, բավարարել մասնակի՝ Արնաս Միկուլսկիի անունից 10.04.2017թ. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացված դիմում-բողոքի հիմքով վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով ոչ իրավաչափ ճանաչել կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 186-Ա որոշումը: Հայցը մնացած մասով մերժել: Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովից հոգուտ հայցվոր Արնաս Միկուլսկիի բռնազանձել 4000 դրամ՝ որպես պետական տուրքի հատուցում: Պետական տուրքի հարցը մնացած մասով համարել լուծված:»:

Դատարանը ՎԴ/4154/05/17 գործով վճռել է. ««Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության, Սառա Մելքոնյանի, Սուսաննա Ազիզյանի, Էլիզա Չախարյանի, Ռուբեն Բաբայանի և Անի Սիրեկանյանի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի և թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ գործողությունները (անգործությունը) և վարչական ակտերը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, մերժել:»:

Դատարանը Հայցվորների կողմից բերված հայցը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ.

1. Դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, դիտորդի՝ իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջի իրավունքը ծագում է բացառապես այն դեպքում, երբ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել քվեարկության կարգի որևէ խախտում:
2. Վկաներ Արա Բաղդասարյանի և Մայիս Ղազարյանի ցուցմունքների, այդ թվում՝ երկու վկաներին միաժամանակ հարցաքննելու ժամանակ տված ցուցմունքների, համադրության արդյունքում՝ Դատարանը մոտ ձևավորվել է ներքին համոզմունք առ այն, որ հավաստի են վկա Մայիս Ղազարյանի տված ցուցմունքները, այսինքն՝ Արա Բաղդասարյանի կողմից 04.04.2017 թվականին, ժամը՝ 10:20-ի սահմաններում թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված չստորագրված դիմում-բողոքների վերաբերյալ վերջինիս կողմից Մայիս Ղազարյանի հետ այդ դիմում-բողոքները մինչև նույն օրը, ժամը՝ 12:00-ն ներկայացնելու վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:
3. Դատարանը փաստել է, որ տարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու է եղել նիստ հրավիրել և գործողություններ կատարել (որոշումներ կայացնել) առ 08.04.2017 թվականը, հետևաբար՝ 07.04.2017 թվականին նիստ հրավիրելով և սույն վարչական գործով վիճարկվող գործողություններն այդ օրը կատարելով այս կամ այն կերպ չեն խախտվել օրենքով սահմանված ժամկետները, հետևաբար նաև՝ դիտորդների իրավունքները:
4. Անդրադառնալով Հայցվորների ներկայացուցիչի՝ 07.04.2017 թվականին տեղի ունենալիք նիստի վերաբերյալ 06.04.2017 թվականին, ժամը՝ 22:00-ի սահմաններում ծանուցվելը ողջամիտ չհամարվելու փաստարկին՝ Դատարանն այդ փաստարկն անհիմն է համարում՝ հաշվի առնելով ինչպես այն հանգամանքը, որ վերոնշյալ իրավակարգավորումների իմաստով՝ օրենս-

- դիրը քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18:00-ն ստացված դիմումների մասով տարածքային ընտրական հանձնաժողովներին տրամադրել է դրանց պատասխանելու սեղմ ժամկետ (պահանջել է նշված ժամկետում ներկայացված դիմումներին պատասխանել մինչև քվեարկության օրվանից հետո՝ 6-րդ օրը), այնպես էլ այն հանգամանքը, որ դիտորդների՝ նիստի վերաբերյալ մինչև նիստի կայացումը նշված ժամկետում ծանուցումն ապահովված լինելու պայմաններում, Դատարանի գնահատմամբ, վերջինները ողջամտորեն զրկված չեն եղել նիստին մասնակցելու և գործողությունների վերաբերյալ տեղեկանալու հնարավորությունից, հետևաբար՝ այդ պայմաններում Հայցվորներ՝ Սառա Մելքոնյանի, Սուսաննա Ազիզյանի, Էլիզա Զաքարյանի, Ռուբեն Բաբայանի և Անի Սիրեկանյանի իրավունքների որևէ խախտում տեղի չի ունեցել:
5. Անդրադառնալով Հայցվորներ Սառա Մելքոնյանի, Սուսաննա Ազիզյանի, Էլիզա Զաքարյանի, Ռուբեն Բաբայանի և Անի Սիրեկանյանի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 06.05.2017 թվականի թիվ 251-Ա որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջին, Դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ սույն վարչական գործով վիճարկվող որոշումն իրավաչափ է, քանի որ բխել է օրենսդրի՝ սահմանած իրավակարգավորումներից:
 6. Անդրադառնալով վարչական մարմինների գործողություններով (անգործությամբ) և/կամ վարչական ակտերով Հայցվորներ՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության իրավունքների խախտման հարցին՝ Դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 06.05.2017 թվականին

կայացված թիվ 251-Ա որոշմամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության և «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության որևէ իրավունք չի խախտվել, քանի որ վերջիններս ակնհայտորեն չեն հանդիսանում վերը նշված գործողությունները (անգործությունը) և վարչական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտներ՝ այն հիմնավորմամբ, որ վիճարկվող գործողությունները (անգործությունը) և վարչական ակտը չեն վերաբերում իրենց հավատարմագրմանը, մինչդեռ, հասարակական կազմակերպություններին իրավունք է վերապահված վիճարկելու բացառապես իրենց հավատարմագրմանը վերաբերող վարչական ակտերը, գործողությունները (անգործությունը):

7. Դատարանը մատնանշել է նաև, որ անհրաժեշտ չի համարում առանձին-առանձին անդրադառնալ վկայակոչած մյուս փաստարկների գնահատմանը, քանի որ բովանդակային առումով դրանք արդեն իսկ ներառված և հերքված են Դատարանի վերը նշված վերլուծություններով և հիմնավորումներով: Սույն վարչական գործով նախապատրաստվում է վերաքննիչ բողոք՝ 14.05.2018թ. կայացված վճռի դեմ:

Թիվ ՎԴ/5385/05/17 վարչական գործով դատարանը փաստարկել է, որ դիտորդն օժտված չէ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման, խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու, համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության վերացնելու, հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները ըստ ենթակայության վերահասցեագրելու, տեղամասերում քվեարկության արդյունքների վրա խախտումների ազդեցությունը քննարկե-

լու և գնահատելու միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացնելու իրավունքներով՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կանոնակարգումների իմաստով, իսկ հանձնաժողովների նախագահները՝ նշված միջոցները ձեռնարկելու պարտավորություն:

Դատարանն արձանագրել է, որ միայն սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման առկայության կանխավարկածն է դիտորդի մոտ ձևավորում ընտրական հանձնաժողովների որոշման, գործողության (անգործությամբ) դեմ պաշտպանություն հայցելու իրավունքը, իսկ վարչական մարմնի մոտ այդ իրավունքի պաշտպանության ուղղությամբ համարժեք գործողություններ, այդ թվում՝ պատշաճ վարչարարություն իրականացնելու և գործը լուծող ըստ էության որոշում կայացնելու պարտականությունը:

Ինչ վերաբերում է հայցվոր հասարակական կազմակերպության՝ իր դիտորդների իրավունքների պաշտպանության սուբյեկտ հանդիսանալու փաստարկին, ապա դատարանը գտնում է, որ նույնիսկ այն պարագայում, եթե այդ կազմակերպությունը դիտարկվեր որպես իր դիտորդների իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավունքով օժտված սուբյեկտ, այդուհանդերձ, քննարկվող դեպքում դա չէր ազդելու խնդրահարույց որոշումների եզարափակիչ՝ «որոշեց» մասի վրա, քանի որ կազմակերպությունների պարագայում ևս վարույթ չհարուցելու որոշումն իրավաչափ էր լինելու այն նույն պատճառաբանություններով, որպիսի պատճառաբանություններով դատարանը իրավաչափ է գնահատել վարույթի հարուցումը մերժելու մասին վարչական մարմնի որոշումը՝ դիտորդների դիմում-բողոքների առնչությամբ:

Անդրադառնալով հայցվորների այն փաստարկին, ըստ որի ընտրական հանձնաժողովների կողմից ուղղակիորեն խախտվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, քանի որ ներկայացված դիմումին կից փաստաթղթերի (լիազորագրի մասով) ոչ ամբողջական ցանկի վերաբերյալ դիմումատուին ծանուցելու պարտականությունը հանձնաժողովի կողմից պարզապես չի կատարվել, ապա դատարանը հայտնում է, որ այն ևս անհիմն

է: Մասնավորապես, Դատարանն արձանագրել է, որ երբ դիմումը ներկայացվել է ներկայացուցչի միջոցով և չի ներկայացվել օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր, ապա նման դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին:

Միաժամանակ, Դատարանն արձանագրել է, որ խնդրահարույց որոշումները կայացվել են օրենսդրի կողմից նման որոշումների կայացման համար սահմանված ժամկետների պահպանմամբ:

Նշված գործով վճռի բողոքարկումը գտնվում է ընթացքի մեջ:

Թիվ ՎԴ/4097/05/17 վարչական գործով դատարանը փաստարկել է, որ առկա է բովանդակային անհամապատասխանություն՝ հայցադիմումի և պատասխանողներին ուղղված դիմում-բողոքների մեջ հայցվորի մատնանշած խախտման և թիվ 11/3 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի հայցվորների անունից կատարված գրառման միջև: Այսինքն՝ ի սկզբանե հայցադիմումի մեջ նշված տեղեկությունները և համապատասխան գրանցամատյանում առկա տեղեկությունները հակասում են իրար:

Միևնույն ժամականակ, ըստ դատարանի, դիտորդն օժտված չէ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման, խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու, համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության վերացնելու, հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները ըստ ենթակայության վերահասցեագրելու, տեղամասերում քվեարկության արդյունքների վրա խախտումների ազդեցությունը քննարկելու և գնահատելու միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացնելու իրավունքներով՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կանոնակարգումների

իմաստով, իսկ հանձնաժողովների նախագահները՝ նշված միջոցները ձեռնարկելու պարտավորություն:

Ինչ վերաբերում է հայցվոր հասարակական կազմակերպության՝ իր դիտորդների իրավունքների պաշտպանության սուբյեկտ հանդիսանալու փաստարկին, ապա դատարանը գտնում է, որ նույնիսկ այն պարագայում, եթե այդ կազմակերպությունը դիտարկվեր որպես իր դիտորդների իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավունքով օժտված սուբյեկտ, այդուհանդերձ, քննարկվող դեպքում դա չէր ազդելու խնդրահարույց որոշումների եզրափակիչ՝ «որոշեց» մասի վրա, քանի որ կազմակերպությունների պարագայում ևս վարույթ չհարուցելու որոշումն իրավաչափ էր լինելու այն նույն պատճառաբանություններով, որպեսզի պատճառաբանություններով դատարանը իրավաչափ է գնահատել վարույթի հարուցումը մերժելու մասին վարչական մարմնի որոշումը՝ դիտորդների դիմում-բողոքների առնչությամբ:

Դատարանն արձանագրել է, որ միայն սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման առկայության կանխավարկածն է դիտորդի մոտ ձևավորում ընտրական հանձնաժողովների որոշման, գործողության (անգործությանը) դեմ պաշտպանություն հայցելու իրավունքը, իսկ վարչական մարմնի մոտ այդ իրավունքի պաշտպանության ուղղությամբ համարժեք գործողություններ, այդ թվում՝ պատշաճ վարչարարություն իրականացնելու և գործը լուծող ըստ էության որոշում կայացնելու պարտականությունը:

Միաժամանակ, Դատարանն արձանագրել է, որ խնդրահարույց որոշումները կայացվել են օրենսդրի կողմից նման որոշումների կայացման համար սահմանված ժամկետների պահպանմամբ:

Թիվ ՎԴ/4102/05/17 վարչական գործով դատարանը փաստարկել է, որ օրենսդիրն իրավունք չի վերապահել դիտորդին պահանջելու հանձնաժողովի նախագահից վերացնելու տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված խախտումները: Օրենսդրի կողմից դիտորդին իրավունք չի վերապահվել նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյան-

նում գրանցված խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման, խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու, համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության վերացնելու, հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները ըստ ենթակայության վերահասցեագրելու, տեղամասերում քվեարկության արդյունքների վրա խախտումների ազդեցությունը քննարկելու և գնահատելու միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացնելու:

Դատարանը փաստարկել է նաև, որ դիտորդի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց գրանցամատյանում գրառում կատարելու պահանջ ներկայացնելու վերաբերյալ:

Դիտորդը, ինչպես նաև վերջինիս հավատարմագրած՝ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունը, ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն այն դեպքում, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ օրենսգրքով սահմանված իրավունքը՝ սուբյեկտիվ իրավունքը և օբյեկտիվ իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասությամբ վերջիններս օժտված չեն, դատարանն այդ մասով իրավաչափ է համարում թիվ 26 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 8-Ա որոշումը՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ և այդ մասով որոշումն անփոփոխ թողնելու մասին կենտրոնական ընտրական հանձնաժողովի 06.05.2017թ. թիվ 256-Ա որոշումը:

Նշված վճիռը բողոքարկվել է վերաքննիչ դատարան:

3. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված վճիռների դեմ բերվել են վերաքննիչ բողոքներ: Տասնչորս գործով (թիվ ՎԴ/4086/05/17, ՎԴ/3994/05/17, ՎԴ/4052/05/17, ՎԴ/3991/05/17, ՎԴ/3992/05/17, ՎԴ/3980/05/17, ՎԴ/4053/05/17, ՎԴ/4063/05/17, ՎԴ/4072/05/17, ՎԴ/4067/05/17, ՎԴ/4102/05/17, ՎԴ/5385/05/17, ՎԴ/5381/05/17, ՎԴ/4097/05/17) վճիռները բողոքարկվել են ամբողջությամբ: Քսանինը միջանկյալ դատական ակտերի (ՎԴ/3978/05/17, ՎԴ/3976/05/17, ՎԴ/3983/05/17, ՎԴ/3975/05/17, ՎԴ/3984/05/17, ՎԴ/4059/05/17, ՎԴ/4062/05/17, ՎԴ/4058/05/17, ՎԴ/4066/05/17, ՎԴ/4068/05/17, ՎԴ/4070/05/17, ՎԴ/4073/05/17, ՎԴ/4074/05/17, ՎԴ/4084/05/17, ՎԴ/4085/05/17, ՎԴ/5375/05/17, ՎԴ/5387/05/17, ՎԴ/5374/05/17, ՎԴ/5378/05/17, ՎԴ/5376/05/17, ՎԴ/5393/05/17, ՎԴ/4081/05/17, ՎԴ/4100/05/17, ՎԴ/4099/05/17, ՎԴ/4091/05/17, ՎԴ/4543/05/17, ՎԴ/5861/05/17, ՎԴ/5862/05/17, ՎԴ/4045/05/17) դեմ ևս ներկայացվել են վերաքննիչ բողոքներ:

ՎԴ/4102/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից արձանագրված օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու հիմքով տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների իրավաչափության հարցի վերաբերյալ բողոքարկվել են, քանի որ համարել ենք դրանք անհիմն այն պատճառաբանությամբ, որ ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումներն իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր

անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից արձանագրված ընտրախախտումները պետք է հանգեցնեն իրավասու մարմինների կողմից համարժեք գործողությունների ձեռնարկմանը՝ խախտումը կանխարգելելու և/կամ վերացնելու, արձանագրելու, քվեարկության արդյունքների վրա դրա ազդեցությունը գնահատելու ուղղությամբ: Տեղամասում արձանագրված ընտրախախտումների կապակցությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից պետք է ձեռնարկվեն համարժեք գործողություններ, ինչն ուղղակիորեն բխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդհանուր լիազորություններից և պարտականություններից, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահի՝ քվեարկության ընթացքում տեղամասային կենտրոնում՝ ընտրական օրենսգրքով նախատեսված պահանջների կատարումը ապահովելու և անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատելու պարտականությունից:

Դատարանի այն պատճառաբանությունները, որոնց համաձայն՝ դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կարգավիճակից բխող սուբյեկտիվ իրավունքների խախտման վերաբերյալ վերաբերելի և թույլատրելի ապացույցներ դատարան չեն ներկայացվել, ամբողջությամբ անհիմն են, քանի որ հայցադիմումում հատուկ շեշտվել է, որ հայցվորների ներկայացուցիչը, օժտված լինելով լիազորողների կողմից հայտարարություններ անելու իրավասությամբ, տարածքային ընտրական հանձնաժողովի նիստի ընթացքում հայտարարել է, որ բոլոր տարածքային ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմում-բողոքներում առկա «*խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում*» արտահայտությունը նշանակում է հենց այն, որ գնահատականը արձանագրելու պահանջը յուրաքանչյուր դեպքում դիտորդի կողմից ներկայացվել է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, սակայն չի կատարվել: Բացի դրանից, ի տարբերություն քաղաքացիական դատավարության և քաղաքացիական գործով դատարանների՝ վարչական դատարանն օժտված է գործով օբյեկտիվ իրա-

կանությունը պարզելու առաքելությամբ, որը երաշխավորելու նպատակով օրենսդիրը վարչական դատարանին օժտել է ի պաշտոնե «*ex officio*» փաստերը պարզելու լիազորությամբ և սահմանել է այդ լիազորության՝ հիշյալ նպատակով դատարանի կիրառման պարտականություն՝ միևնույն ժամանակ պարտավորությունների մի ամբողջ ինստիտուտ ձևավորելով հիշյալ գործառույթի ապահովման համար: Դատարանը վճռով ոչ իրավաչափորեն վերագրել է նշված փաստի ապացուցման պարտականությունը հայցվորներին՝ առանց որևէ իրավական նորմի հղում կատարելու:

Հայցվորներին՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների/անգործության բողոքարկման համար ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով (օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների մասով) վարույթի հարուցման մերժումը տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից հանգեցրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջների խախտման: Մասնավորապես, դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ընդհանուր բնույթի ընտրախախտումների (օբյեկտիվ ընտրական իրավունքի) հիմքով դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք չունենալու վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի հետևությունը չի բխել ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից: **Յուրաքանչյուր ոք** կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ **ընտրական իրավունքը**: Այս իրավունքն իր բովանդակային ծավալում ներառում է յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը:

Հիմնավորվել է, որ ՏԸՀ որոշումները ոչ իրավաչափ են, քանի որ դրանք կայացվել են ընտրությունների արդյունքների ամփոփումից ընդամենը մեկ օր առաջ՝ ուղղակի միտում ունենալով զրկելու բողո-

քաբերներին ՏԸՀ որոշումները մինչև ընտրությունների արդյունքները ԿԸՀ բողոքարկելու իրական հնարավորությունից: Այսինքն՝ բացառվել է ՏԸՀ որոշումների դեմ ներկայացված բողոքները ԿԸՀ-ի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում դրանք գնահատելու հնարավորությունը: Հիշյալ նպատակը հաստատվել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների հայտնաբերած փաստերով:

Հասարակական կազմակերպությունների իրավասությունների մասով հիմնավորվել է, որ Հասարակական կազմակերպության կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասու սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը բխում է հանրային գանգատի «actio popularis» ինստիտուտի էությունից, որից բխում է, որ այլ անձանց խախտված իրավունքների համար դատարան կամ իրավասու այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունք պետք է ունենան այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընդգրկում են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

ՏԸՀ և ԿԸՀ որոշումների դեմ բերված բողոքներով բարձրացվել է նաև այն հարցը, որ դիմում-բողոքներով արձանագրված խախտումները պետք է ենթարկվեին արդյունավետ քննության հենց դիմում-բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում՝ բողոքաբերներին այդ վարույթներին մասնակից դարձնելու պայմաններում:

Բողոքարկման հիմքերում դրվել է նաև այն հանգամանքը, որ տարածքային ընտրական հանձնաժողովները գործել են **ոչ թե որպես անկախ վարչական մարմիններ, այլ իրենց գործառույթներն իրականացրել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անմիջական համակարգման և վերահսկողության պայմաններում:**

Թիվ ՎԴ/4063/05/17 վարչական գործով տեղամասային ընտրա-

կան հանձնաժողովների/հանձնաժողովների նախագահների գործողությունների (անգործության) իրավաչափության գնահատման հարցի վերաբերյալ դատարանի պատճառաբանությունները անհիմն են հետևյալ հիմնավորումներով. համապատասխան խախտումների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տեղեկացնելու և/կամ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու մասին առաջարկություն ներկայացնելու դիտորդի իրավունքը և այդ խախտումները կանխելու (վերացնելու) ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հանձնաժողովի/հանձնաժողովի նախագահի ուղղակի պարտականությունը բխում են ՀՀ ընտրական օրենսգրքով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների և հանձնաժողովների նախագահների համար սահմանված ընդհանուր լիազորություններից և պարտականություններից: Խախտումները տեղամասային հանձնաժողովների/ հանձնաժողովների նախագահների կողմից չկանխարգելելու (և/կամ չվերացնելու) արդյունքում անմիջականորեն խախտվել են դիտորդների ընտրական իրավունքները: Վերոնշյալ անձանց ընտրական իրավունքները խախտվել են ոչ միայն որպես ընտրելու իրավունքով օժտված քաղաքացիների, այլև որպես դիտորդական առաքելություն իրականացնող դիտորդների, քանի որ համապատասխան խախտումների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տեղեկացնելուց և/կամ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու մասին առաջարկություն ներկայացնելուց հետո վերջիններիս մոտ ծագել է այդ խախտումները կանխելու (վերացնելու) ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու ուղղակի պարտականություն, որը բխել է ՀՀ ընտրական օրենսգրքով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների և հանձնաժողովների նախագահների համար սահմանված ընդհանուր լիազորություններից և պարտականություններից: Նույն հիմնավորմամբ խախտվել են նաև դիտորդներին հավատարմագրած հասարակական կազմակերպությունների ընտրական իրավունքները:

Դատարանի այն եզրահանգումը, որի համաձայն՝ ընտրական գործընթացում դիտորդական առաքելություն իրականացնելու իրա-

վունք ունեցող՝ սույն վարչական գործով հայցվորներ հասարակական կազմակերպություններից բացի մյուս հայցվորները հանդիսանում են նշված գործողությունների իրավաչափությունը վիճարկելու ոչ իրավասու սուբյեկտներ, հիմնավոր չէ, քանի որ առաջին հերթին դիտորդական կազմակերպությունն ունի ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք և այս իրավունքի շրջանակներում ունի թե դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման և թե օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ են: Նրանց դիտորդական առաքելությունը հանրային գործառույթ է, որի նպատակն է ապահովել ընտրությունների թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների պատշաճ իրականացմանը: Վերոնշյալ հանրային իրավական գործառույթի արդյունավետ իրականացումը, ի թիվս այլնի, պայմանավորված է դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասու սուբյեկտությամբ: Յուրաքանչյուր դեպքում, երբ ընտրական տեղամասում դիտորդի կողմից արձանագրված ընտրախախտումների կանխարգելման, վերացման կամ այլ անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի նախագահի կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ, խախտվել են նաև համապատասխան դիտորդի և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության ընտրական իրավունքները: Հասարակական կազմակերպության կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասու սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը բխում է հանրային գանգատի «actio popularis» ինստիտուտի էությունից, որից բխում է, որ այլ անձանց խախտված իրավունքների համար դատարան կամ իրավասու այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունք պետք

է ունենան այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընդգրկում են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

Դատարանի այն դիտարկումը որի համաձայն՝ դիմում-բողոքները առանց քննության թողնելու ր դրանք վերադարձնելու ԿԸԸ-ի որոշումը իրավաչափ է, ամբողջությամբ անհիմն է, քանի որ, դիմում-բողոքն առանց քննարկման վերադարձնելու գործողությունն իրավաչափ չի: Ոչ իրավասու մարմին դիմում ներկայացնելու կապակցությամբ երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրենքներով նախատեսված են միմյանցից տարբեր կարգավորումներ՝ այլ իրավական հետևանքներով: Նման պայմաններում վարչական մարմինները, տվյալ դեպքում՝ ընտրական հանձնաժողովները, դիմումատուների նկատմամբ տարաբնույթ մոտեցում ցուցաբերելով մի դեպքում՝ վերահասցեագրում են դիմումներն իրավասու վարչական մարմին, մյուս դեպքում՝ դիմումները չեն քննարկում և կից գրությամբ ուղարկում են դիմումատուներին՝ այդպիսով խախտելով նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը, որի համաձայն՝ **վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից երկակի չափանիշների կիրառման մասին է վկայում այն դեպքը, երբ ՀՅԴ կուսակցության կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել դիմում, որը վերահասցեագրվել է թիվ 17 տարածքային ընտրական հանձնաժողով: Արձանագրենք նաև, որ նույն դրույթով ղեկավարվելու տեսանկյունից ընտրական հանձնաժողովների կողմից ևս առկա է երկակի չափանիշների կիրառում: Այսպես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 09.04.2017թ. թիվ 162-Ա որոշմամբ արձանագրվել է, որ չնայած այն հանգամանքին, որ այլ անձի փոխարեն քվեարկության վերաբերյալ դիմումը ներկայացվել է սահմանված ժամկետների խախտումով, այդուհանդերձ դիմումը քննարկվել է թիվ 33 տա-

րաճքային ընտրական հանձնաժողովի կողմից, կայացվել է որոշում, որով փաստվել է, որ թիվ 33/39 ընտրական տեղամասի ընտրողների ցուցակի համապատասխան տողում նշված ընտրողի փոխարեն տեղի է ունեցել քվեարկություն այլ անձի կողմից: Սա այն դեպքում, երբ նույն՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմում-բողոքները ենթակա են առանց քննարկման վերադարձման դիմողներին: Այսպիսով, կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հայցվորների դիմում-բողոքը քննարկելուց հրաժարվելը դրա չվերահասցեագրելը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ոչ իրավաչափ է:

Վերաքննիչ բողոքները փաստարկված են եղել նաև հետևյալ հիմնավորումներով. տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների (անգործության) ոչ իրավաչափությունը, ՏԸՀ և ԿԸՀ որոշումները՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից արձանագրված ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելը և ՏԸՀ և ԿԸՀ որոշումներով վարչական վարույթի հարուցումը մերժելը հանգեցնում է դիտորդների օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման այն հիմնավորմամբ, որ ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Հետևաբար այն դեպքում, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից չեն ձեռնարկվում անհրաժեշտ միջոցներ դիտորդի կողմից արձանագրված ընտրախախտումների կանխարգելման, վերացման կամ արձանագրման և քվեարկության վրա՝ դրանց ազդեցության գնահատումն ապահովելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, խախտվում են նաև համապատասխան դիտորդի և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության ընտրական իրավունքները: Համապատասխան խախտումների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տեղեկացնելուց և/կամ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու մասին

առաջարկություն ներկայացնելուց հետո վերջիններիս մոտ ծագում է այդ խախտումները կանխելու (վերացնելու) ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու ուղղակի պարտականություն, որը բխում է ՀՀ ընտրական օրենսգրքով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների և հանձնաժողովների նախագահների համար սահմանված ընդհանուր լիազորություններից և պարտականություններից:

Իրավաչափ չէ նաև դատարանի այն դիրքորոշումը, որ դիտորդներն ու դիտորդական կազմակերպություններն ընդհանուր ընտրական իրավունքի պաշտպանության իրավասու սուբյեկտ չեն և բացակայում է նրանց անմիջական իրավունքների խախտման փաստը, անձնական շահագրգռվածությունը, ուստի վարչական վարույթի հարուցումը մերժելն իրավաչափ է: Դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ, ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումները: Հասարակական կազմակերպության կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասու սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը բխում է հանրային գանգատի «actio popularis» ինստիտուտի էությունից, որի համաձայն՝ այլ անձանց խախտված իրավունքների համար դատարան կամ իրավասու այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունք պետք է ունենան այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընդգրկում են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

ՏԸՀ և ԿԸՀ որոշումների դեմ բերված բողոքներով բարձրացվել է նաև այն հարցը, որ դիմում-բողոքներով արձանագրված խախտումները պետք է ենթարկվեն արդյունավետ քննության հենց դիմում-բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում՝ բողոքաբերներին այդ վարույթներին մասնակից դարձնելու

պայմաններում: Հետևաբար ՏԸՀ և ԿԸՀ որոշումներով նշված հիմնավորումներն առ այն, որ հանձնաժողովները գնահատել են բողոքներով ներկայացված փաստական հանգամանքների ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա, իսկ գրանցամատյանում չարտացոլված փաստական հանգամանքներն ընդունվել են որպես հաղորդում և քննարկվել, չեն կարող դիտարկվել որպես վերաբերելի և բավարար պատճառաբանություններ, քանի որ այդ ենթադրյալ քննակմանը (վարչական վարույթին) մասնակից չեն դարձվել դրանք արձանագրած և դրանց կապակցությամբ բողոք ներկայացրած դիտորդներն ու դիտորդական կազմակերպությունները և այդ քննարկումները չեն կարող գնահատվել որպես բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ:

ՏԸՀ որոշումները ոչ իրավաչափ են, քանի որ դրանք կայացվել են ընտրությունների արդյունքների ամփոփումից ընդամենը մեկ օր առաջ՝ ուղղակի միտում ունենալով զրկելու բողոքաբերներին ՏԸՀ որոշումները մինչև ընտրությունների արդյունքները ԿԸՀ բողոքարկելու իրական հնարավորությունից: Այսինքն՝ բացառվել է ՏԸՀ որոշումների դեմ ներկայացված բողոքները ԿԸՀ-ի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում դրանք գնահատելու հնարավորությունը: Հիշյալ նպատակը հաստատվել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների հայտնաբերած փաստերով:

Բողոքներով բարձրացվել է նաև այն հարցը, որ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները ոչ իրավաչափ են նաև այն պատճառով, որ դրանք հանդես են եկել ոչ որպես անկախ վարչական մարմինների, այլ իրենց գործառույթներն իրականացնելիս եղել են ԿԸՀ-ի անմիջական համակարգման և վերահսկողության տակ և իրենց որոշումներում չեն եղել և չեն գործել անկախ և ինքնուրույն: Հիշյալ հանգամանքը հիմնավորվել է նրանով, որ ՔԴՆ-ի շրջանակներում դիտորդական առաքելություն է իրականացվել 37 տարածքային ընտրական հանձնաժողովներում և դրանց սպասարկման տարածքներում: Այդ հանձնաժողովներ են ներկայացվել ընդհանուր

առմամբ 309 դիմում-բողոքներ, մինչդեռ դրանց քննության նպատակով ՏԸՀ-ները բողոքների քննության համար նախատեսված ժամանակահատվածում չեն ձեռնարկել ոչ մի գործողություն, այնուհետև ներկայացված դիմում-բողոքների կապակցությամբ նիստերի ճնշող մեծամասնությունը նշանակել են 07.04.2017թ., ընդ որում նույն ժամին՝ ժամը 12:00-ին: Ներկայացվածի կապակցությամբ դիտորդական առաքելության կողմից ձեռք են բերվել ապացույցներ և փաստեր առ այն, որ դա կատարվել է ԿԸՀ-ի միջամտությամբ: Այսինքն՝ ԿԸՀ-ի ուղղակի հրանգավորմամբ հետապնդվել է դիմում-բողոքների քննությանը դիմումատուների մասնակցությունը և կայացված որոշումների բողոքարկումը մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը բացառելու նպատակ:

ՏԸՀ և ԿԸՀ որոշումները ոչ իրավաչափ են նաև այն հիմնավորմամբ, որ ձևականորեն կայացնելով վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշում՝ իրականում հանձնաժողովի կողմից կայացվել է ըստ էության որոշում՝ առանց վարչական վարույթ հարուցելու: Բողոքարկման սուբյեկտ լինել/չլինելու հարցերը չէին կարող հանձնաժողովի քննարկման առարկա դառնալ վարչական վարույթ հարուցելու փուլում, ինչի արդյունքում խախտվել են դիմումատուների՝ պատշաճ վարչարարության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/3991/05/17 և ՎԴ/3992/05/17 վարչական գործերով 03.04.2018թ. կայացված վճիռները բողոքարկվել են մասնակի՝ հայցի չբավարարված մասով: Մասնավորապես, նշվել է, որ վարչական դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման. խախտվել են ՀՀ Սահմանադրության 48-րդ, 50-րդ, 79-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի, ՀՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասի, 47-րդ հոդվածի 6-րդ

մասի, 48-րդ հոդվածի 3-րդ մասի, 5-րդ և 7-րդ մասերի, ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 37-րդ հոդվածի և 57-րդ հոդվածների, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշման պահանջները:

Մասնավորապես մատնանշվել է, որ Դատարանի կողմից կատարված հետևությունը, ինչպես նաև պատճառաբանությունները հիմնավորված չեն և չեն բխում ՀՀ օրենսդրությունից: Վարչական դատարանն իր պատճառաբանություններում հղում է կատարել միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցված խախտումներին և դրանց հետ կապված գործողությունների կատարման հարցին, մինչդեռ, հայցվորների կողմից վիճարկվել են դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից արձանագրված օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու հիմքով տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունները՝ անկախ դրանց գրանցված լինելու կամ չլինելու հանգամանքից: Նույն տրամաբանությամբ այդ խախտումներին առնչվող անհրաժեշտ գործողությունների կատարման պահանջը ներկայացվել է վերադաս ընտրական հանձնաժողովներին: Ինչ վերաբերում է վերոգրյալ հիմքերով տեղամասային ընտրական հանձնաժողովների/հանձնաժողովների նախագահների գործողությունների (անգործության) իրավաչափության գնահատման հիմքում վարչական դատարանի կողմից դրված պատճառաբանություններին, ապա դրանք բացառապես հիմնված են ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ և 67-րդ հոդվածի 14-րդ հոդվածների բառացի վերարտադրության վրա՝ անտեսելով հայցադիմումում մատնանշված հիմքերն ու փաստարկները, որոնցով հիմնավորվում է թե՛ համապատասխան խախտումների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին

տեղեկացնելու և/կամ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու մասին առաջարկություն ներկայացնելու դիտորդի իրավունքը և թե՛ այդ խախտումները կանխելու (վերացնելու) ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հանձնաժողովի/հանձնաժողովի նախագահի ուղղակի պարտականությունը, որը բխում է ՀՀ ընտրական օրենսգրքով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների և հանձնաժողովների նախագահների համար սահմանված ընդհանուր լիազորություններից և պարտականություններից:

Բացի դրանից, տվյալ գործերով վարչական դատարանի վճռով առկա չէ պատճառաբանություն Հայցվորների կողմից ներկայացված մի շարք հիմնավորումների, դրանց ոչ իրավաչափության կամ կիրառելի չլինելու վերաբերյալ. դրանք ուղղակիորեն շրջանցվել են Դատարանի կողմից՝ հանգեցնելով նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 5-րդ մասի, 123-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130.1-րդ հոդվածի դրույթների խախտմանը:

4. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումների դեմ բերվել են վճռաբեկ բողոքներ: Վճռաբեկ բողոքները բերվել են տասնհինգ գործերով (թիվ ՎԴ/3980/05/17, ՎԴ/4067/05/17, ՎԴ/4086/05/17, ՎԴ/5381/05/17, ՎԴ/3975/05/17, ՎԴ/4068/05/17, ՎԴ/4070/05/17, ՎԴ/4073/05/17, ՎԴ/5375/05/17, ՎԴ/5374/05/17, ՎԴ/5378/05/17, ՎԴ/5376/05/17, ՎԴ/4543/05/17, ՎԴ/5393/05/17, ՎԴ/4100/05/17) ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կայացված վերաքննիչ բողոքները վերադարձնելու և պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջանկյալ դատական ակտերի դեմ:

Վերաքննիչ դատարանը վերադարձրել է վերաքննիչ բողոքներն այն հիմնավորմամբ, որ վերաքննիչ բողոքի համար չի վճարվել պետական տուրք, իսկ պետական տուրքի վճարումից ազատելու միջնորդությունն էլ մերժվել է այն հիմնավորմամբ, որ պետական տուրքի վճարումից ազատվում են այն անձինք, որոնք իրացնում են ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ պաշտպանության համապատասխան միջոցները: Ըստ դատարանների՝ պետական տուրքի վճարման արտոնությունից օգտվելու համար պարտադիր պայման է, որպեսզի առկա լինի ընտրական համապատասխան իրավունքի ենթադրյալ խախտում և այդ խախտման փաստով դատական պաշտպանության իրավունքի իրացում, մինչդեռ տվյալ դեպքում դատարանները եզրահանգել են, որ հայցվորների կողմից դատաքննության առարկա են դարձվել վարչական այնպիսի ակտեր, որոնք որևէ կերպ չեն առնչվում վերջիններիս ընտրելու կամ ընտրվելու իրավունքի հետ:

Վճռաբեկ բողոքները ներկայացվել են հետևյալ հիմնավորումների շրջանակներում. ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված հայցերը՝ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների հիմ-

քով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ, ենթակա են քննության՝ յուրաքանչյուր անձի ընտրելու իրավունքի խախտման համատեքստում: Հետևաբար, այս գործերի շրջանակում հայցվորները պետք է ազատված լինեն պետական տուրքի վճարման պարտականությունից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ժդ) կետի ուժով, որի համաձայն՝ դատարաններում պետական տուրքից ազատվում են հայցվորները ընտրելու և/կամ ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով:

5. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈ ՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Աժ ընտրությունների շրջանակներում արձանագրված խախտումների հիման վրա ՔԴՆ իրավաբանական թիմի կողմից Մարդու իրավունքների Եվրոպական դատարան (ՄԻԵԴ) ներկայացվել է 4 գանգատ¹:

Գանգատներից մեկը դիտորդական կազմակերպությունների, դիտորդների և մի խումբ քաղաքացիների անունից է ներկայացվել: Վերջիններս պահանջում են ՄԻԵԴ-ից ճանաչել ՄԻԵԿ 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

Մյուս երկու գանգատները ներկայացվել են համապատասխանաբար թիվ ՎԴ/3308/05/17 և ՎԴ/3309/05/17 վարչական գործերի

¹ «Ասպարեզի» անունից ներկայացված ՍԴ դիմումի ու ՄԻԵԴ գանգատի մասին տես ԻԵՄ-ի 02/04.2017թ. խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության զեկույցը (www.citizenobserver.am)

(տարածքային ընտրական հանձնաժողովներում ՔԴՆ դիտորդների իրավունքների սահմանափակման վերաբերյալ) հիման վրա: Դիմողների պահանջն է ճանաչել ՄԻԵԿ 10-րդ, 6 (1)-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների, ինչպես նաև ՄԻԵԿ 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:

ՔԴՆ իրավաբանական թիմի կողմից ՀՀ սահմանադրական դատարան են ներկայացվել 4 դիմումներ: Դրանցից մեկը ներկայացվել է դիտորդական կազմակերպությունների, դիտորդների և մի խումբ քաղաքացիների անունից 02.04.2017թ. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ: Դիմումը չի ընդունվել ՍԴ վարույթ:

Մյուս երկու դիմումները ներկայացվել են համապատասխանաբար թիվ ՎԴ/3308/05/17 և ՎԴ/3309/05/17 վարչական գործերի (տարածքային ընտրական հանձնաժողովներում ՔԴՆ դիտորդների իրավունքների սահմանափակման վերաբերյալ) հիման վրա: Այս դիմումներով դիմումատուները բարձրացրել են ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 47-րդ հոդվածի 5-րդ մասի, 48-րդ հոդվածի 7-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 28-րդ, 42-րդ հոդվածներին, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ, 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերի համապատասխանության հարցը

04.04.2018 թ. ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՎԴ33/09/05/17 վարչական գործով որոշում է կայացրել Արշակ Մկրտչյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

02.05.2018 թ. ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՎԴ/3308/05/17 վարչական գործով որոշում է կայացրել Տաթևիկ Արահամյանի անհատական դիմումը վարույթ ընդունելու մասին: